

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խնդրում ենք այս տարվայ մեր բաժանորդներին շուտով հասցնել խմբագրութեանը «Մըշակի» բաժանորդագիրը: Խնդրում ենք նոյնպէս մեր անցեալ տարվայ մի քանի բաժանորդներին, որոնց վրա ապառիկներ են մնացել, ուղարկել խմբագրութեանը իրանց վրա մնացած ապառիկները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք համաձայն ենք: Ներքին տեսութիւն: Նամակ խորհրդի: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Յրանախա: «Մշակի» հեռագիրներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական Հալիսին քուռը:

ՄՆԵՔ ՀԱՄԱԶԱՅՆ ԵՆՔ

«Մշակի» № 26-ի մէջ մենք յայտնեցինք այն միտքը, որ հարկաւոր է որ և է բարեգործական նպատակի նուիրել այն գումարը, որ մնացել է ալաշկերտցի գաղթականներին օգնելու համար կազմված մասնաժողովի ձեռքում:

Ուստի «Кавказъ» լրագիրը բաղաձայն անելով մեր առաջնորդող յօդուածից, համակրութեամբ է վերաբերվել դէպի մեր յայտնած միտքը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱԼԽԻՆ ՔՈՒՌՁԸ *)

I

Այս յօդուածը գրելուս պատճառը եղաւ հետեւեալ հանգամանքը: Ներկայ տարուս յունվարի 31-ին քուրբի անդամներս ժողովեցանք քուրբը ուրիշ տուն տեղափոխելու դիմումով: Վասն դիւանական տունը ոչ միայն փոքր, նեղ է և ցած առաստաղ (առէք) ունի, այլ և նորա տախտակամաններէն և պատերէն այնպէս սաստիկ ցուրտ կուգայ, որ ձմեռները անհնար է նորա մէջ քուրբը ժամ մի տեղ անշարժ նստելու, եթէ չուզես ոսկրացաւ (ревматизм) ստանալ: Այս պատճառաւ անդամներս արդէն վաղուց որոշել էինք, ինչ կուզէ լինի, այս տունը թողնել և ուրիշը գտնել:

Այլաբաղադրացի համազգիներուս պէտք է իմանալ, որ Նախիջևանի մէջ եղած տները, առանց երկու—երեք բացառութեան, գրեթէ ամենը փոքր, նեղ, անյարմար են և հազար ու մէկ պատճառներով:

*) Քուրբը Նախիջևանցիներէն նշանակում է հին, մշտնադարձ, պատահական հայրեր, լաթեր, քիւրք, տրիւք, տարբէ: Այս բառը թերեւս զրաբառի քուրբն է, նշանակութիւնը փոխառած:

Հիշա ինչ է ասում ուսու լրագիրը:

«Նայելով այդ հարցի վրա աւելի լայն տեսակետից, կարելի է կարծել որ ամեն տեսակ բարեգործական նպատակ, որ աչքի առաջ կունենայ ազգի շահերը, կը բաւականացնի այդ փողերի նուիրատուներին: Բայց որովհետեւ այդ փողերը կապված են Ալաշկերտի հայերի անուան հետ, մենք կարծում ենք, որ այդ գումարով կարելի էր հիմնել մի քանի ստիպենդիաներ ալաշկերտցի հայերի անունով, և ստիպենդիաներին վերցնել նոյն իսկ Ալաշկերտի ազգաբնակութեանց: «Արարատեան ընկերութիւնը» որի մասնաւոր նպատակն է ազգի լուսաւորութիւնը, կարող էր յանձն առնել կատարել այդ օգտաւէտ գործը:»

Մենք կատարելապէս համակրում ենք ուսու լրագրի առաջարկութեանը, բայց թող կը տանք մեզ նրկատել, որ «Արարատեան ընկերութիւնը» ինքն դեռ մի նոր ընկերութիւն է, ինքն դեռ հազել կարող է շունչ առնել, ինքն դեռ կարօտ է օգնութեան: Եթէ նրան

կատարելներ ունեն, նոցա չիւտողը, մեծաւ մասամբ, եղել են նոյն իսկ տանտէրերը, թէև, ձեռք համար, ժամանակէ ժամանակ ճարտարապետը եկել է, աչքէ անցրել է, քանակից կամ յիսուն մանկը ծոցը դրել է և հեռացել է: Նախիջևանցիներ իւր տունը չիւտում է ըստ թույլ իւր ազգականներին (սոյ), որոնց ամեն տարի մի կամ երկու անգամ հրաւիրում է իւր տուն տոնախմբութեան կամ մի ուրիշ դիպուածով հազկերոյթի, և սրբան եւ նկատել եմ, ամենամեծ տունը շատ շատ և այն մին մինի սեղմելով, իւր մէջ կարող է տեղաւորել քառասունից մինչև վաթսուն հոգի: Ինքն իրեն հասկացում է, որ քուրբի համար յարմար տուն գտնելու բաւական զօրուր բան է Նախիջևանի մէջ: Այս ևս պէտք չէ մոռնալ, որ մեր քաղաքի չէնքերը (եպիթ) մասնաւոր 2½—3 տոկոսը հազիւ կը բերեն, այսինքն հինգ կամ չորս անգամ փոքր, քան թէ առուտորի ամենահամեմատ շահը: Ասածներս անմիջապէս կը հետեւի, որ Նախիջևանի մէջ նոր ի նորոյ տուն չիւտել ձեռնառու չէ, իսկ ուլ որ չիւտել է կամ անհազել է, կամ փոշմանել է:

Շատ չափել—չափելիս ու հաշուելէն յետ մենք տեսանք, որ եթէ քուրբի համար առանձին (պաշխա) տուն չիւտել, վրան անշուշտ պիտի մտնուի յիսունէն մինչև վաթսուն հազար մանկէթ. այսպիսի անհազել գումարը այսպիսի անշուշտ—չափերի կարծիքով—առարկայի համար մասինք, ներկայ հանգամանքում, ոչ միայն անկարելի էր, այլ և զորաւ փա մտածելն կամ խօսելն անգամ խելացիութիւն էր: Վասն դի հաշուազէտ Նախիջևանցիներ, որ իւր մայր—գումար իր տոկոսը երբէք 12-էն պակաս արժեքուցած

րան կամենում ենք օգնել, ինչն ենք սահմանափակում նրա իրաւունքները: Ընկերութեան ամբողջ զբաղմունքը, որով նա պէտք է գործ կատարի և օգնութիւն հասնի ամբողջ Հայաստանին, գուցէ մի տասերորդական էլ չէ կազմում այն գումարի, որ այս րօպէիս կայ մեր Թիֆլիսի մասնաժողովի ձեռքում: Ուրեմն նուիրելով ընկերութեանը այդ տաս հազար ռուբլ գումարը այն պայմանով որ այդ փողը միմիայն ալաշկերտցիների ուսման համար գործ ածվի, մենք կը դատապարտենք «Արարատեան ընկերութիւնը» գոյութիւն ունենալ միմիայն Ալաշկերտի հայ ազգաբնակչութեան համար, իսկ մնացած Հայաստանին օգնել միայն այն փշտանքներով, որոնք ստացվում են ամեն տեղերի հայերի միանուագ նուիրատուութիւններից:

Աւելի լաւ չէր լինի նուիրել մասնաժողովի ձեռքում ունեցած գումարը թէև նոյն «Արարատեան ընկերութեանը», բայց ոչինչ պայմաններով չը սահմանափակել նրա գործունէութեան ազատութիւնը: Այն ժամանակ «Արարատեան

ընկերութիւնը» ստանալով այդ տեսակ նշանաւոր գումար, ճշմարիտ կարող էր ոտքերի վրա կանգնել, հաստատ հիմք ստանալ, Հայաստանի մէջ խոր արմատներ գցել և գործ դնել այդ փողերը որպէս իր հիմնական, մշտական գրամազուր, որի տոկոսներով միայն կօժանդակեր իր ձեռքով Հայաստանի մէջ հիմնած դպրոցներին:

Վերջապէս կարելի էր պայման դնել որ այդ փողերի մէջ յայտնի մասը միայն գործ դրվեր ալաշկերտցի հայ մանուկների ուսման գործի համար:

Աւելորդ չենք համարում նկատել այստեղ որ ուսու լրագիրը մի կէտի մէջ սխալ կերպով է հասկացել մեր միտքը: Մենք ասացինք որ կարելի էր նոյնպէս այդ փողերով հիմնել Թիֆլիսում Բագուի «Մարդասիրական» ընկերութեան պէս մի նոր ընկերութիւն, բայց երբեք չէինք առաջարկի նուիրել այդ փողերը նոյն իսկ Բագուի «Մարդասիրական» ընկերութեանը, համոզված լինելով որ դա կատարելապէս ապարդիւն կը լինէր: Բագուի ընկերութիւնը

չէ, թէ որ կաշին էլ «սկզբնական լինի» 2½-ով յօժարելու չէ:

Ինչպէս ասացի:

1. Այժմուայ քուրբի շինութեանը փոքր է, ցուրտ է, առաստաղները ցած են, կը նշանակէ բոլորովին անյարմար է:
2. Նախիջևանի տները չիւտած են փոքրաթիւ գերդաստանի բնակութեան, և ոչ բազմամեծ ժողովը իւր մէջ տեղաւորեցնելու համար:
3. Նոր չէնք կառուցանելու (խորհելու) համար ոչ փող ունինք և ոչ բաւարար վարձատրութիւն:

Այս բանս մէկ լաւ հասկացէք և մտքերիդ մէջ ամուր պահեցէք:

II

Սրանից 15—20 տարի առաջ քաղաքիս մէջ միջնակարգ հարստութեամբ մի վաճառական կար անունը Գ. Ս., որ ինչպէս կասեն, շատ սիրող է եղել գեղեցիկ բաներու «Человек со вкусом»: Նորը ճաշակ ունենալը յայտնաւոր չէ իս: Մարկայ: Յաճախ Մոսկով, Պետերբուրգ, Օդեսա և այլ գեղեցիկաշէն քաղաքներ երթնեկելով պ. Ս. սրտի մէջ ցանկութիւն յղացել է, մի օր իր մայրենի Նախիջևանի մէջ օրինաւոր տուն ունենալ, որ ոչ միայն յարմարեցնուած լինէր հանգիստ և փառաւոր կեանքի, այլ և պատահական մեծատուն և վեհազն այցելուներուն ևս հիւրասիրելով իւր տանը ցոյց տար նոցա իւր ճոխ ապրուստը և նուրբ ճաշակը, Պարոններ, ծիծաղեցէք վրաս կամ մի ծիծաղիք, բայց ևս ձեզ կասեմ, որ այս անմեղ սնտիաւութիւնը ես շատ վեր դասում եմ այնպիսի մոլութիւններէն—որոց անունը, ի հարկէ չեմ տալ—որոցմէ ազատ չենք

ոչ մինս: Ինչ և իցէ: Տան յատակագիծը նկարել է մի երևելի ճարտարապետ: Եթէ տունը, ինչպէս որ պէտք է, աւարտած լինէր, Պետերբուրգի Невский проспекті-ին ևս զարդարանք կարող էր լինել. բայց այն էլ չապագիւմ աւելցնել, որ լրացնելու շատ բան մնացած չէ: Երևակայեցէք ձեզ. ինքը տունը բաւականին մեծ, երկարակեայ, սենեակները խոշոր, բարձր, չոր. պատուհաններն մեծ, պատերը մարմարեօնածէն փրւած, տախտակամանների փառքէն, արտաքինը խողովակաւոր, սանդուղիքը թափու երկաթէ, դռնէն արձանաւորներով (кариатиды) զարդարած, և այլն և այլն. միով բանիւ եթէ պ. Ս. գործը միաձև յաջողութեամբ առաջ երթար, այս օրուայ օրս Նախիջևանը պիտի ունենար մի այնպիսի շէնք տուն, ուր եթէ թաղաւորապիսի ևս հիւրասիրէիր, չէիր ամաչիլ: Բայց..... չար բաղդի բերմամբ, յիշեալ պարտի գործը ձախողակ երթալով, տունը մնում է ոչ թէ անկատար, այլ մի քանի զարդերէ զրկած: Տան վրա մնաւ է մօտ ի մօտ 40 կամ 50 հազար. իսկ եթէ սորա վրա դրուի այլ ևս 10 հազար ռուբլի, նա կարող է մի օրինաւոր չէնք դառնալ:

Ինչպէս ասացի, ահա 15 տարի է, որ այս տունը մնացել է, դիտէք ինչի նման. նման այն մարդուն, որ հրաւիրուած է խնջոյքի, երեսը լուացել է նա, մաքուր չապիկ և կօշիկներ հագել է, հագն է իւր նոր հալաւները, բայց տակաւին օժած և սանդղած չէ մազերը և վրան քանի մի կաթիլ ամպոռ է սրբական չէ: Ամեն անգամ մօտէն անցնելիս, կը հաւատանք, սիրտս տրոր տրոր է լինում, թէ ինչու այդպէս պիտի լինէր: Աս-

իր պաշտօնական անդրոյն և ապար-
դին գործունէութեամբ, չը նա-
յելով որ իր ձեռքումն ունի ըն-
դարձակ իրաւունքներով գեղեցիկ
կանօնադրութիւն, ունի նմանա-
պէս դրամական միջոցներ, ամեն-
քին համոզեց որ ընդունակ է որ
և է գործ կատարել և որ նրան
փող նուիրել մի և նոյն է որ վեր
առնես այդ փողը և կամուրջեց
գետը շարունակ...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

12 փետրվարի

Այստեղի Զորահանգ անուանեալ տօնավաճա-
ռը (крещенская ярмарка) սկսեց յունվարի
6-ին և շարունակեց մինչև նոյն ամսի վերջը:
Ի հարկէ այս միջոցին խաբով քաղաքը լցեցաւ
նորեկ հիւր վաճառականներով և սովորականէն
աւելի զուարթացաւ: Բոլոր քաղաքի կենտրոնի
լայն հրապարակները բռնված էին տախտակա-
շէն խանութներով, որոնք լի էին ապրանքներով:
Բացի դրանց նոյն իսկ տօնավաճառների հա-
մար պատրաստ և մինչև այն օրը կողպած չինու-
թիւնները ևս բացվեցան: Առհասարակ ամբողջ
քաղաքը ստացաւ այս տօնավաճառին մի առան-
ձին տեսք, ուրախութիւն տիրեց և կարծես թէ
ոգևորվեցաւ, չը նայելով որ այս անգամ ճանա-
պարհի վատութիւնը ձիւնի պատճառով փոքր
ինչ պակասեցրեց հիւրերի քանակութիւնը: Ժո-
ղովուրդը այս միջոցին թէն ուրախութեան
մէջ էր, բայց մի և նոյն ժամանակ շատ երկեղ
ունէր և ունի ժամտախտից, որովհետեւ խա-
բովի Զորահանգ տօնավաճառը Ռուսաստանի
նշանաւոր տօնավաճառներից մէկը լինելով (ա-
ռուստուրը հասնում է ընդամենը 30—40 միլ-
լիոնի) կարող էր Աստրախանի և առհասարակ
այն կողմի վաճառականների և ապրանքի միջո-
ցաւ տեղափոխել տարեկան տարափոխիկ ժա-
նապահի հիւանդութիւնը: Այստեղ արդէն տի-
րապետում են առայժմ ծաղիկ, դիֆտերիա և
տիֆ վարակիչ հիւանդութիւնները և սոցա զոհը
այնքան շատ է սովորականից, որ բարձր
իշխանութիւնը կարգադրել է վարակիչ հիւան-
դութեամբ նշնեցեալներին չը պահել մինչև երեք

տուած վկայ, որ եթէ պէտք եղածի չափ փող
ունենայի, ճշմարիտ է, չէի բաշխել պ. Ս. -ին,
բայց անպատճառ մի նար և պայման կը գը-
նէի նրա տան պ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՂԻԻ

Ժողովոյն Խորհրդոյ Բարձրագոյն Հաստատեալ Մարդասիրական Ընկերութեան յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Հայաստանի

Վաթ 1879 թի:

№	Մ Ո Ւ Տ Ք	Ուրիշ	Կող.	№	Ե Լ Ք	Ուրիշ	Կող.
1	Առ 1-ն ծննդաբ. 1878 թի մնացեալ էր Ընկերացական զուտ զուճար 19,395—11 45 Հատ Խաղարկական տոմսակներ — 4,702—50	24097	62	1	Օրիորդական ուսումնարանի վարժապետաց վարձ տրուած է—	1567	64
	Յընթաց 1878 թի ստացուած է			2	Նոյն ուսումնարանի համար գնեցաւ ձեռագործութեան զանազան իրեր	130	38
2	17 Անվտուկ անդամային վճարք ի պ. պ. Մ. Մատաթեանցէ, Յ. Ոսկանեանցէ, Ն. Մեղեքեանցէ, Ի. Ժամհարեանցէ, Ն. Տէր-Սարգսեանցէ, Յ. Քառեանցէ, Ի. Շահնազարեանցէ, Ս. Տէր-Սահակեանցէ, Ն. Նազարեանցէ, Ի. Երզնկեանցէ, Ա. Գրիգորեանցէ, Ի. Անտոնեանցէ, Ն. Սարգսեանցէ, Ի. Տիգրանյանցէ, Ն. Նազարեանցէ, Մ. Իսախանյանցէ և Ն. Կ. Ժամհարեանցէ —	1700	—	3	» » պահպանաց —	183	—
3	2 Պատուաւոր Անդամային վճարք ի պ. Ս. Բաղդեանցէ և Կին Ք. Քառեանցէ —	2000	—	4	» » վառելիքայտի —	38	30
4	Տարեկան Անդամային վճարք ի Բագու 13 —	170	—	5	Գործադարական և մանր ծախք —	193	51
5	» ի Գանձակ 21 —	192	—	6	Այլի կնոջ Կիրակոսեանի —	120	—
6	Ընծայարարութիւնը —	70	—	7	Հանազան լրագիրների ուղարկուեցաւ —	60	—
7	Ընկերացական շնորհակալից արգիւնք —	154	—	8	Ընկերութեան որդեգրաց համար —	1322	50
8	» շնորհակալից պատվոգրերից —	279	40	9	Քրիստի և Խաչմաղի ուսումնարանաց համար —	350	—
9	» տպարանից արգիւնք —	572	60	10	Շնորհակալի կարկառանաց համար —	51	50
10	» 45 հատ տոմսակների տոկոսից —	2738	70	11	Տպարանի համար ծախք եղաւ —	80	26
11	Տոկոսից զուտ զուճարից այն է 19,395 ուր. համար —	44	54	12	Աղքատ ուսանողաց համար գնու		